

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

10 օգոստոսի 2022թ.
ք. Երևան

N 63-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 131-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանների ձևերը և լրացնելու կարգը սահմանելու մասին» N 131-Ն որոշման.

1) թիվ 3 հավելվածում «տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ 1 դիտորդ» բառերը փոխարինել «տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ 1 դիտորդ, իսկ համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից միասնական՝ 2 դիտորդ,» բառերով,

2) թիվ 3 հավելվածում «Չիրկիզվող պահարանը ոստիկանության ծառայողներից ընդունելու մասին» բառերը փոխարինել «Չիրկիզվող պահարանը և տեխնիկական սարքավորումները ոստիկանության ծառայողներից ընդունելու մասին» բառերով.

3) թիվ 3 հավելվածում «Ընտրողներին գրանցող (մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում՝ երկու անդամի)» բառերը փոխարինել «Ընտրողներին գրանցող (մինչև 1200 ընտրողի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1200-ից ավելիի դեպքում՝ երկու անդամի)» բառերով,

4) թիվ 3 հավելվածում «Քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող (մինչև 1000 ընտրողի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում՝ երկու անդամի)» բառերը փոխարինել «Քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող (մինչև 1200 ընտրողի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1200-ից ավելիի դեպքում՝ երկու անդամի)» բառերով,

5) թիվ 3 հավելվածում «Գրառումներ Քվեարկության ընթացքում ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտման դեպքի վերաբերյալ հանձնաժողովի անդամի, վստահված անձի կամ դիտորդի գնահատականի մասին»

բառերը փոխարինել «Գրառումներ Քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտման դեպքի վերաբերյալ հանձնաժողովի անդամի, վստահված անձի կամ դիտորդի գնահատականի մասին» բառերով,

6) թիվ 3 հավելվածում «ՎԵՐԱԴԱՍ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ» բառերը փոխարինել «ՎԵՐԱԴԱՍ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ, ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ» բառերով,

7) թիվ 3 հավելվածում «Վերադաս ընտրական հանձնաժողովի անդամի ազգանունը, անունը, հայրանունը» բառերը փոխարինել «Վերադաս ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը» բառերով,

8) թիվ 3 հավելվածում «Վերադաս ընտրական հանձնաժողովի անվանումը կամ համարը» բառերը փոխարինել «Վերադաս ընտրական հանձնաժողովի անվանումը կամ համարը, կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը» բառերով,

9) թիվ 4 հավելվածի 6-րդ կետում «և վերադաս ընտրական հանձնաժողովի անդամների» բառերը փոխարինել «, վերադաս ընտրական հանձնաժողովի անդամների և թեկնածուների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ.Մուկուչյան